Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր
/Խորհրդատվական ծառայություններ, կազմակեպության ընտրություն/

Գործառնական ձեռնարկի պատրաստում, EE-CS-25/2016

Երկիրը՝ Հայաստան
Ծրագրի անունը՝ Էներգախնայողության ծրագիր
Դրամաշնորհ՝ TF 012163

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից /Գլոբալ բնապահպանական հիմնադրամի միջոցներով/ ստացել է դրամաշնորհ Էներգախնայողության ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:
Նպատակը: Հիմնական նպատակն է մշակել Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամի /ՀՎԷԷՀ/ Գործառնական ձեռնարկը, որը կներառի հիմնադրամի առաջիկա 5-10 տարիների գործունեության ուղղությունները/ձևերը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ՝ Անհրաժեշտ է մշակել համապարփակ Գործառնական ձեռնարկ, այդ թվում նաև թիրախային շուկաների սահմանում, պատվիրատուների ընտրություն, ֆինանսավորման և իրականացման եղանակներ, առաջարկվող ներդրումային պլան, ֆինանսական պարտավորություններ և պոտենցիալ աղբյուրներ, կադրային և այլ կարողությունների անհրաժեշտություն և այլն: Մինչ Ձեռնարկի նախապատրաստումը, Խորհրդատուն պետք է նաև հաստատի, որ առաջարկվող ընթացակարգերը գործում են օրենքի սահմաններում, կամ առանձին փաստաթղթով առաջարկի առկա օրենսդրության/կանոնակարգերի բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, որոնք հնարավորություն կտան իրականացնել առաջարկված գործողությունները: Մասնավորապես, Համաշխարհային Բանկի ԳԷՖ Դրամաշնորհի համաձայնագրով (օր.՝ ԷԾՄՀ-ների օգտագործումը, ՀՎԷԷՀ պատվիրատուների գնումները, ԶԲԱ հիմնված գնումները, գումարի մարման անվտանգությունը) սահմանված ժամանակի ավարտից հետո մոտեցումները պետք է ճշգրտվեն:
Սույն առաջադրանքը իրականացնելու համար Խորհրդատուից ակնկալվում է հետևյալ աշխատանքների իրականացումը.
Առաջադրանք 1. Վերանայել ՀՎԷԷՀ հիմնական փաստաթղթերը, ներառյալ Կառավարության որոշումները, կանոնակարգերը, գոյություն ունեցող Գործառնական ձեռնարկը, էներգետիկ ծառայությունների մատուցման համաձայնագրի օրինակները, ՀԲ կողմից ֆինանսավորված նախկին ծրագրերի վարկավորման բաղադրիչները (Քաղաքային ջեռուցման ծրագիր, Վերականգնվող էներգետիկայի ծրագիր) և այլ փաստաթղթեր, որոնք կարգավորում են Հիմնադրամի գործունեությունը:
Առաջադրանք 2. Պատրաստել ամբողջական ԳՁ-ը, հիմնվելով կազմված և համաձայնեցված ընդհանուր նկարագրի և հայեցակարգի վրա, Հոգաբարձուների խորհրդի հաստատման համար:
Առաջադրանք 3. Նախապատրաստել իրավական հիմք ունեցող նախագծային փաստաթղթերով հավելված, հիմնվելով արդեն համաձայնեցված մոտեցումների վրա, Հիմնադրամի Կանոնադրության կամ այլ նորմատիվային փաստաթղթերի փոփոխության վերաբերյալ, որոնք կաջակցեն Հիմնադրամի գործունեությանը նոր Գործառնական Ձեռնարկի շրջանակում:
Առաջադրանք 4. Խորհրդատուներին ներկայացնել ԳՁ-ը և այլ արդյունքներ:

Առաջադրանքի իրականացման մոտավոր տևողությունը կազմում է մոտ 3 ամիս:

Հիմնադրամը, որն հանդիսանում է ծրագրի իրականացման գործակալությունը հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին (խորհրդատուներ) ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը նշված ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ ունեն ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ: Ընտրության չափանիշներն են՝

Ընդհանուր փորձառությունը քաղաքականության վերլուծությունների, պետական կամ միջազգային կազմակերպությունների ծրագրերի ձևավորման և կազմման, գնահատման գործունեության մեջ:
40 միավոր

Փորձառություն հայեցակարգերի, ընթացակարգերի, կանոնակարգերի, ուղեցույցերի, օրենսդրական փաստաթղթերի մշակման գործում: *40 միավոր*

Միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքի փորձ: *10 միավոր*

Խորհրդատուն ուշադրություն պետք է դարձնի Համաշխարհային Բանկի՝ ՎՁՄԲ վարկերի և ՄՁԸ փոխառությունների և դրամաշնորհների ներքո Համաշխարհային Բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրությունը և վարձումը 2011թ. հունվարի Խորհրդատուների Ուղեցույցի (Խորհրդատուների ուղեցույց) 1.9-ը կետին, որը սահմանում է Համաշխարհային բանկի շահերի բախման քաղաքականությունը:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատուի ձևով՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Խորհրդատուն կընտրվի խորհրդատուի որակավորման վրա հիմնված (ԽՈԸ) ընտրության մեթոդով, որն ամրագրված է խորհրդատուների ընտրության ՀԲ Ողեցույցում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, տեղական ժամանակով ժամը 9:00-18:00-ը:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել ստորև նշված հասցեով մինչև **2016թ. փետրվարի 3–ը,** տեղական ժամանակով ժամը 18:00:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, տուն 32
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել
+ (37410) 588 011 ժամը 09.00-ից մինչև 18.00-ը
Զարուհի Ղարագյոզյանին
և այցելել հիմնադրամի կայքը՝ www.r2e2.am
Ֆաքս + (37410) 588 011
Էլ. փոստ g.zara@r2e2.am
zaruhigharagyozyan@yahoo.com